ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

11 սեպտեմբերի 2018 թվականի N 112-Ա

«ՄԵՐՁՄՈՍԿՈՎՅԱՆ» ԲԲԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 55-րդ, 56-րդ և 57-րդ հոդվածներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման փոփոխված նախագծի 2018 թվականի օգոստոսի 16-ի Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 69 և 2018 թվականի հունիսի 04-ի Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» N 1373 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի մայիսի 21-ի թիվ Ֆ-174/18 գրությունը, «Մերձմոսկովյան» ԲԲ ընկերության փետրվարի 09-ի թիվ 01/018, 2018 թվականի մայիսի 07-ի թիվ Ա-0024 գրությունները և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Մերձմոսկովյան» ԲԲ ընկերության (այսուհետ՝ ընկերություն)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրում արդյունահանման աշխատանքներ կատարելու 2012 թվականի հոկտեմբերի 31-ի օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/135 թույլտվությունում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- թույլտվության գործողության ժամկետը սահմանել մինչև 2068 թվականի հոկտեմբերի 14-ը,
- հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել 50,0հազ.մ^3 արդյունահանվող պաշար,
- տրամադրվող պաշարների քանակը՝ 2756,0 հազ.մ^3 ըստ A+B կարգերի,
- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրի արդյունահանման նպատակով տրամադրված կոորդինատային համակարգի՝ 1.X=5357.2 (4516865) Y=5588.7 (8414107) H=1781.0, 2.X=5399.0 (4516907) Y=5643.5 (8414162) H=1828.0, 3.X=5206.6 (4516714) Y=5872.0 (8414391 H=1757.0, 4.X=5172.0 (4516680) Y=5825.0 (8414344) H=1751.0 կոորդինատներով սահմանափակված տարածքը ընդլայնել և ընկերությանը տրամադրել՝ 1.X=4516700 Y=8414230, 2.X=4516752 Y=8414142, 3.X=4516756 Y=8414122, 4.X=4516776 Y=8414096, 5.X=4516766 Y=8414040, 6.X=4516828 Y=8413990, 7.X=4516870 Y=8413980, 8.X=4516938 Y=8413986, 9.X=4516980 Y=8413954,

10.X=4516988 Y=8413924, 11.X=4517000 Y=8413910, 12.X=4517024 Y=8413912, 13.X=4517044 Y=8413860, 14.X=4517042 Y=8413828, 15.X=4517074 Y=8413788, 16.X=4517086 Y=8413730, 17.X=4517074 Y=8413688, 18.X=4517100 Y=8413650, 19.X=4517102 Y=8413608, 20.X=4517212 Y=8413508, 21.X=4517348 Y=8413772, 22.X=4516732 Y=8414272 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով սահմանափակված տարածք և լեռնահատկացման թիվ ԼՎ-135 լեռնահատկացման ակտի՝ 1.X=5136 Y=5798 H=1742.0(h=-2.0), 2.X=5358 Y=5562 H=1763.0(h=-0.0), 3.X=5410 Y=5645 H=1826.0(h=-56.0), 4.X=5206 Y=5890 H=1755.0 (h=-15.0) կոորդինատները փոխարինել՝ 1.X=4516665 Y=8414198 H=1750.0(h=0), 2.X=4516670 Y=8414084 H=1738.0(h=0), 3.X=4516704 Y=8414000 H=1739.0(h=0), 4.X=4516738 Y=8413638 H=1740.0(h=0), 5.X=4516704 Y=8413582 H=1740.0(h=0), 6.X=4516658 Y=8413448 H=1740.0(h=0), 7.X=4516774 Y=8413450 H=1740.0(h=0), 8.X=4516950 Y=8413480 H=1720.0(h=0), 9.X=4517078 Y=8413552 H=1728.0(h=0), 10.X=4517212 Y=8413508 H=1729.0(h=0), 11.X=4517348 Y=8413772 H=1768.0(h=-18), 12.X=4516733 Y=8414290 H=1767.0(h=-17) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով:

2.Կատարել փոփոխություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կառնուտի անդեզիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-135 պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր):

3. Ընդերքի գործակալության պետին՝

1)օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքում փոփոխություն կատարելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագրի փոփոխությունն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2)ընկերության կողմից պայմանագրում կատարված փոփոխությունը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության, ընդերքօգտագործման պայմանագրի, լեռնահատկացման ակտի փոփոխված տարբերակները,

3)ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագրի փոփոխությունը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փոփոխությունների փաթեթը չստանալու դեպքում, սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4)ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

6.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ